

ՊԱՏՄԱԿԱՆ

ԵՂԻՇԷ ՊԱՏՄԱԳԻՐ

ԵՒ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ՄԱՂԴԷԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԵՒ ԱՆՈՐ ԴԱՒԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Ա.

ՆՈՐ ՊԱՐՍԱԿԱՍՏԱՆ ԿԱՄ ԻՐԱՆ

(ԸՆԳԶԱՆՈՒՐ ԱԿԱՐԿ ՄԸ)

Նոր Պարսկաստան կամ Իրան, Ասիոյ հարաւ-արեւմտեան կողմը, նոր պետութիւն մըն է, կազմուած ԺԸ. դարու վերջերը (Յ. Ք.). Պաճար (Quadjar) անունով հարստութեան մը կողմէն, ծագումով թիւրքմէն, որուն արդի թագաւորն է, իրենց լեզուով Շահը՝ Մահամէտ Րիզա Փէհլէվի և որուն թագաւորական տիրոջն է Շահնշահին Իրանի: Ներկայ Պարսկաստանը իր մէջ կը պարփակէ իր երբեմնի ունեցած երկիրներուն փոքր մէկ մասը միայն: Արդի Պարսկաստանը կը պարփակէ իր հիմակուան սահմաններէն ներս՝ Պելուճիստանի և Աֆղանիստանի երկիրներէն փոքր մասեր: Պելուճիստանը, Պարսկաստանի արեւելեան կողմը կը գտնուի, լեռնոտ և կիսափայրբնի երկիր մը: Երկրին բնակիչները, մեծ մասամբ վրանարնակ, խաշնարած և վաչկատուն, այլևայլ աղուան ցեղերէ կազմուած են: Պելուճիստանի խանութեան տարածութիւնն է 275,000 քառ. քիլոմէթր և 450,000 բնակչութիւն մը ունի: Մայրաքաղաքն է Քէլատ, որ 25,000 բնակչութիւն ունի: Աֆղանիստանը Պարսկաստանի և Հնդկաստանի միջև գտնուող անկախ պետութիւն մըն է, որուն տարածութիւնն է 731,000 քառ. քիլոմէթր և 10,000,000 բնակչութիւն ունի: Երկրին մայրաքաղաքն է Քապուլ, համանուն գետին վրայ, 100,000 բնակչութեամբ: Երկիրը մեծ մասամբ լեռնային է և ցա-

մաքային խիտ կլիմայ ունի: Բնակիչները իրանեան և աղուան ցեղերէ կը բաղկանան, որոնք վրանարնակ և խաշնարած են:

Արեւելքէն Բամիրի (Pamir) և հիւսիսէն Շիրվանի սարահարթները Պարսկաստանը կը շրջապատեն: Պարսկաստանի արեւմտեան սահմաններն են Իրաքը (Միջագետք) և Թուրքիան, Զակրոս և Սիւլէյման լեռներով: Հարաւէն՝ Պարսից ծոցը և Սմանի ծովը: Հիւսիսէն՝ Անգր-Կովկասը և Կովկասեան լեռները, Կասպից ծովը և Պուխարայի մէկ մասը:

Պարսկաստանի ընդհանուր տարածութիւնն է 1,644,000 քառ. քիլոմէթր, իսկ բնակչութեան թիւն է 15,000,000, որոնց 2,500,000ը վրանարնակ, թափառական և վաչկատուն են: Երկիրը կ'ոսոգուի Անարէք, Դըզըլ-Աւզուն և Արաքս և ուրիշ բազմաթիւ գետերով և գետակներով: Ունի արգասաբեր դաշտեր, որոնք՝ արմտիք, բամպակ, պտուղ, աֆիոն և ուրիշ այլազան տեսակ արտադրութիւններ կուտան: Արտադրութեան տեսակէտով նշանաւոր է երկրին քարիւղը, որ Իրաքի սահմաններուն երկայնքին կը գտնուի, ուր՝ հսկայ քարիւղի գտարաններ կան հաստատուած: Երկրին քարիւղին կամ սև օսկրին շահագործումը յանձնուած է Անկիօ-Իրանեան ընկերութեան մը: Երկրին ձիերն ու ջորիները նշանաւոր են: Պետական կրօնքը Իսլամութիւնն է, և բնակիչներուն մեծամասնութիւնը մահմետականներէ կը բաղկանայ, որոնք՝ Շիի(*) ազանդին կը պատկանին: Կան նաև Բիւրտեր, Թիւրքմէններ, Աղուաններ, Հայեր, ինչպէս նաև կովկասեան այլ և այլ ցեղեր: Թագաւորը կամ Շահը, իր երկիրը Խորհրդարանով մը կը կառավարէ: Պարսկաստան կերպով մը սահմանադրական թագաւորութիւն մըն է: Պարսկաստանի մէջ

(*) Շիի կամ Շիիթ անունը կը տրուի Պարսկաստանի մէջ բնակող մահմետականներուն: Արտաքայ Պարսկաստանի բնակող մահմետականները իրենք զիրենք Սիւննի կը կոչեն (այսինքն՝ բուն աւանդութեան հետեւողներ կամ շարունակողներ իմաստովը), իբրև միակ ուղղափառ դաւանողներ իսլամութեան:

Շիիները, Մուհամմէտի փեսան Ալին (656-661 Յ. Ք.) միայն օրինաւոր խալիֆան (յաջորդ) կը ճանչնան, զուրս ձգելով Մուհամմէտին ուրիշ յաջորդները, որոնք Սիւննիներէն (Ուղղափառ) կը ճանչնուին իբրև խալիֆաներ (յաջորդներ):

կը խօսուի և կը գրուի զրահան լեզու մը որ է արդի պարսկերէնը, որուն առընթեր կը խօսուին նաև այլեայլ դաւառաբարներ (Dialectes) :

Պարսկաստանի կլիման ցամաքային է : Զմեռը սաստիկ ցուրտ, իսկ ամառը տաք կ'ընէ : Կարաւաններ երբ ճամբորդութեան ընթացքին ձիւնախօսն փոթորիկներու հանդիպին, ինչ որ շատ յաճախադէպ է, կը ստոին և չեն կրնար իրենց ճամբան շարունակել, հակառակ իրենց կողմէն նախապէս ձեռք առած միջոցներուն և զգուշութեանց : Բարձրագոյն սարահարթներու վրայ, ձիւնը 4-5 ամիսներ կը տևէ : ասով արգելք կը հանդիսանայ երկրագործական աշխատութեանց և արտադրութեանց : Պարսկաստան, վարդին, բոխակին, անուշահոտութեանց և սիրահարական երգերու, բանաստեղծութեան հայրենիք կը կոչուի : Գեղեցկակերտ պարտէզները զրախտի մը տեսարանը կը պարզեն անցորդներուն և զթօսաշրջիկներուն աչքերուն :

Մայրաքաղաքն է Թէհրան, որ ունի 500,000էն աւելի բնակչութիւն մը, ուր կը բնակի շահը, կան նաև բազմաթիւ արևելեան գեղեցկութիւններով պալատներ, պարտէզներ և զարաստաններ : Գորգի շինութեան արհեստը և վաճառականութիւնը երկրին գլխաւոր արդիւնաբերութիւնը կը կազմեն, մեծ քանակութեամբ ընտիր գորգեր կ'արտածուին դէպի Եւրոպա և Ամերիկա, որ երկրին եկամուտի գլխաւոր հասոյթներն մին կը կազմէ : Երկրին մէջ կան նաև այլեայլ գործարաններ, որոնք բանուած, գեղեցկահիւս և նրբարուեստ կաշիներ կը պատրաստեն :

Երկրին գլխաւոր քաղաքներն են, Սպահան, Քազվիզ, Համատան, Շիրազ, Քերմանշահ, Ռէշտ, Մէշէտ, Ապատան :

Կասպից մոզուէն մէջ ձկնորսութիւնը իր նախնական վիճակին մէջ կը գտնուի :

Երկրին բարձր մասերուն վրայ արջաբարձութիւնը և խաշնարածութիւնը շատ առաջ գացած են, որոնց բուրդէն համրաւուոր գորգերը կը պատրաստուին և արտասահման կ'արտածուին : Երկիրը մեծ քանակութեամբ ցորեն, գարի և կորեակ կ'արտադրէ : Իսկ Պարսկական մոզին մէջ, բացի ձկնորսութենէ, մարգարիտի որսորդութիւնը ևս առաջ կը տարուի բաւական արդիւնաւորութեամբ :

Ք.

Հին ՊԱՐՍՎԱՍՏԱՆ

(ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ ՍԸ)

Հին պարսիկները ըստ ցեղաբաններու, արիական ծագում ունին, շատ մօտ այն ցեղին, որ այժմ կը գտնուի Հնդկաստանի մէջ, Փանդէս և Ինդոս գետերուն մօտ : Պարսիկները, տեղացի կամ ընդի (Indigène) չէին, այլ՝ արևելքէն Բամիրի⁽¹⁾ կողմերէն եկան այն երկիրը, որ ապա՝ իրենց ցեղին մէկ անունէն Պարսկաստան անունը առաւ :

Պարսիկներուն (հին՝ փարսիներ) զաղթը ժե. - Թ. Բ. դարերուն (Ն. Ք.) տեղի ունեցած է դէպի արևմուտք, սակայն իրենց ցեղին սկզբնական ծագումը կը Ֆոնյ մութ : Բամիրի սարահարթէն դէպի Իրանի⁽²⁾ սարահարթը արշաւող կամ գաղթող իրանեան ցեղերը բազմաթիւ էին և գլխաւոր երկու ցեղերու կը բաժնուէին, Մարեր և Պարսիկներ : Ասոնք սարահարթին բնիկներուն հետ ձուլուեցան և կազմեցին աւելի զօրաւոր և հզօր երկու ցեղեր :

Եկուորները իրենց հետ բերին քաղաքակրթութիւն մը, ցեղային ինչ ինչ աւանդութիւններ, բարքեր և կրօնք մը :

Ստրաբոն⁽³⁾ Յոյն պատմաբանը կ'ըսէ թէ, դէպի Իրանի սարահարթը արշաւող այս ցեղերը, միևնոյն լեզուն կը խօսէին, ունենալով սակայն սրոշ տարբերութիւններ և դաւառաբարբառներ :

Մարերը, կ'ըսէ Հերոդոտոս⁽⁴⁾ պատմա-

(1) Բամիր, լեւնտո երկիր մըն է, Ասիոյ կեդրոնական մասին վրայ, Ռուսիոյ և Աֆղանիստանի միջև, որուն միջին բարձրութիւնն է 5000 մէթր : Բամիրի սարահարթը, հին բազմաթիւ ցեղերու հայրենիքը կամ օրօրանը եղած է :

(2) Իրան անունը կը տրուի, այն մեծ և ընդարձակ հողամասին որ Հնդկաստանէն, Ինդոս գետէն մինչև Տիգրիս գետ, Կասպից ծովէն մինչև Պարսկական ծոցը կը տարածուի : Հայաստան, Պարսկաստան, Աֆղանիստան, Պելուճիստան անոր մէջ կը պարփակուին : Իսկ Իրան անունը մասնաւորաբար Պարսկաստանի կը տրուի :

(3) Ստրաբոն, Յոյն նշանաւոր աշխարհագիր մըն է, ծնած Փոքր-Ասիոյ Կասպողովիա նահանգին Ամասիա քաղաքը : Հեղինակ կը ներկայանայ այլեայլ գործերու, որոնց մէջ նշանաւոր է Աշխարհագրութիւնը (Géographie), (շուրջ 58 ն. Ք. - 25 Յ. Ք.) :

(4) Հերոդոտոս Յոյն ժողովուրդի պատմահայրն

հայրը, տասը զլխաւոր մասերու բաժնուած էին, և խաչնարած ժողովուրդ մըն էին: Ի հնուց անտի, Իրանի սարահարթը, զլխաւոր անցք կամ ճամբայ եղած է ծայրագոյն աշեկէլքի և արեւմտաքի միջև:

Պարսիկները երկու զլխաւոր բարբառներ գործածած են, մին՝ հիւսիսային, իսկ միւսը հարաւային իրանականը:

Առաջինը Աւեստայի, պարսից սուրբ զիրքին լեզուն եղած է, իսկ երկրորդը Աքիմենեանց չրջանին գործածուած գիւանական լեզուն է, որուն նմոյշները կը պահուին Պեհեստունի, Պերսեպոլսոյ և ուրիշ սեպածե արձանագրութեանց մէջ:

Ասորեստանցիք ԺԳ. դարուն (Ն. Ք.) նախ Մարերը և ապա Պարսիկները նըւածեցին, ենթարկելով զանոնք իրենց տիրապետութեան:

Պարսիկները, յաջորդաբար երեք տեսակ նշանագրեր գործածած են:

1. Աեպաձե գրութիւններ, Աքիմենեանց հարստութեան չրջանին:

2. Պահլաւերէն, Արշակունեաց հարստութեան ժամանակ, որոնք արձանագրութեանց մէջ և գրամներու վրայ կ'երևին, ինչպէս նաև Աւեստայի ինչ ինչ յիշատակարանները:

3. Ձենտերէն գրութիւնը, որ նախորդէն ածանցուած է և որով Աւեստան գրուած է:

Իսլամական տիրապետութենէն սկսեալ, Արաբերէն գիրը սկսած են գործածուիլ, որոնց վրայ ինչ ինչ տառեր ու նշանաձայներ աւելցուած են:

Փ.

Ս Ա Ս Ա Ն Ե Ա Ն Յ Հ Ա Ր Ս Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

(226 - 632 Յ. Ք.)

Պարսիկները ունեցած են երեք մեծ հարստութիւններ: 1. Աքիմենեանց, 2.

է, ձեւած փոքր-Ասիոյ Հաղիկարնաս քաղաքին մէջ (աշմու՝ Պատում):

Շատ ճամբորդութիւններ կատարած է, այցելելով այլեայլ երկիրներ և քաղաքներ, Հետաքրքրական տեղեկութիւններ և պատմութիւններ ունի զանազան ցեղերու և անոնց բարքերուն մասին: Իր գրութիւնները պատմութեան ամենէն թանկագին և հետաքրքրական էջերը կը կազմեն (չորջ 484 - 425 Ն. Ք.):

Արշակունեանց և 3. Սասանեանց, Աքիմենեանց հարստութեան հիմնադիրն եղաւ Աքիմենէս, որ Մարերու իշխանութեան լուծէն ազատեց Պարսկաստանը: Այս հարստութիւնը սկսաւ 668-ին (Ն. Ք.) և վերջ գտաւ 330-ին (Ն. Ք.) Դարեհ Գ. կոտորմանի մահուամբ:

Պարթև Արշակունեանց հարստութիւնը Արշակ (կամ՝ Վաղարշ) թագաւորին կողմէն հիմնուեցաւ 255 թուականին (Ն. Ք.) և վերջացաւ 226-ին (Յ. Ք.):

Իսկ Սասանեանց հարստութեան հիմնադիրն եղաւ Արաշիր Սասանեան: Այս հարստութիւնը տեսց 226 - 632 (Յ. Ք.):

Մարերը Արիական ցեղէն էին, կայսրութեան հիմնուելէն առաջ, փոքր իշխանութիւններու բաժնուած: Այս փոքր իշխանութիւնները, տակաւ առ տակաւ, ցեղային միութեանական կապեր հաստատելով, իրարու հետ միացան և կիսքսար թագաւորին օրով Մարաց հզօր կայսրութիւն մը կազմուեցաւ, որուն նշանաւոր թագաւորները եղան Փրատաթ, Կիսքսար, Աստիակէս և ուրիշներ:

Անոնցմէ Աստիակէս, Մարաց կայսրութեան վերջին թագաւորն եղաւ զահազըրկուելով իր թոռան Կիւրոսի կողմէն 549-ին (Ն. Ք.): Կիւրոս նախևառաջ Բաղդէացիներու և Եգիպտացիներու հետ դաշնակցութիւն մը կնքեց: Ապա՝ Լիւզիոյ կրեոս թագաւորին երկիրն աւերեց ու տիրեց Փոքր-Ասիոյ: Բաղդէացիներու գէմ պատերազմեցաւ և անոնց յաղթեց ու գրաւեց իրենց Բարելոն մայրաքաղաքը (538): Կիւրոս իմաստուն քաղաքագէտ մը եղաւ: Իր այս կազմակերպչական կարողութեան և տաղանդին շնորհիւ, կարճ ժամանակուան ընթացքին Արեւմտեան Ասիոյ և Անդր-կովկասի տէր եղաւ: Իր հիմնած Պարսկական կայսրութիւնը տակաւ ընդարձակուելով, Դարեհ Ա. թագաւորին ժամանակ (521 - 485 Ն. Ք.) իր զազաթնակէտին հասաւ: Պարսիկներու ցեղային և ազգային փոտասիրութիւնը այնչափ առաջ գնաց որ, Մարական պատերազմներու պատճառ զարձաւ: Արեւքսանդր Մեծին վիճակեցաւ Պարսիկներուն յաղթել, Դարեհ Գ. ի ժամանակ:

ՊԱՄԳԵՒԻ ՎՐԴ. ՎՐԹԱՆԷՍԵԱՆ
(Շարահակիլի՝ 11)